


միակ ցանկութիւնդ Աստուծուն փառաւորել պիտի շինես: Ահա այն ճանապարհը որով մեղքի խաւարից դէպի Աստուծու հրաշալի լոյսը պիտի գնաս: Ահա այն ճշմարիտ դուռը, որով երկնային խաղաղութեան բնակարանը պիտի մտնես: «Եւ բոլոր ժողովուրդը այս տեսնելով փառք էր տալիս Աստուծուն (Ղուկ. ԺԷ. 45):

Հնորհ տուր մեզ, Տէր, այնպէս հետեւելու Յիսուսին, որ բոլոր այս տեսնողները փառք տային Աստուծուն նորա մեզ արած մեծ ողորմութեան համար: Ա. Կ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂԲԻԻՐՆԵՐ:

Գիտնական պրոֆէսոր Պ. Պապկանեանի յօդոսած:

(«Արարատ» հոկտեմբեր):

Մենք կտեսնենք, որ վերև մեր յառաջ բերած մատենագիրների անունները գլխաւորապէս կգտնվին Խորենացու շորս Գ—Է գլուխներում այսինքն նորա ղիւցազնական ժամանակի մասին արած բնդհանուր ղիտողութիւնների մէջ, այլև որ Խորենացին ծանօթ էր նոցա աշխատութիւնների հետ այնքան, որքան որ նորա կգտնվէին Եւսիբէոսի մէջ, և լծէ նոցա չէ կարելի համարել նորա պատմութեան իսկական աղբիւրները: Աւշք դարձնենք դարձեալ մի տեղի վերայ, ԻԱ գլխում պատմելով, Կտեղիոսի համաձայն, նիւուէի անկման մասին, կաւելացնէ իւրեանից Խորենացին. «Ապա ելծէ ասիցեն ուստի մեզ և զնաինեացն մերոց բազմաց այսպէս գտանել զանուանս և ղգործս, ասեմ. ի հնոցն ղիւանաց Քաղդէացոց, Ասորեստանեայց և Պարսից»: Ի հարկէ այս տեղը պէտք չէ հասկանալ բառ առ բառ, որովհետև Խորենացին չէ եղած ոչ մին, ոչ միւս և ոչ երրորդ երկրում *):

Բայց Ա. գրքի Ը. գլխում բացատրելով Հայաստանի բուն պատմութիւնը, Խորենացին ուշք է դարձնում գլխաւոր և գրեթէ իւր միակ գրաւոր աղբիւրին, որից նա չէ բաժանվում մինչև Բ. գրքի Ժ. գլխիսը: Այս աղբիւրը Մար — Աբաս - Կատինայ է:

Առաջին անգամ Խորենացին կխօսէ նորա մասին Ա. գրքի Ը. գլխում: Մեծ մասամբ Եւսիբէոսից քաղված փաստերի վերայ հիմնելով Հայերի նահապետների կապը Յարէթի սերունդի հետ, նա ձեռնամուխ կլինի

(*) Տասներորդ դարի հւնչակաւոր հայկական պատմաբան Յովհաննէս Կոթողիկոսը, համուստ հաղորդելով Հայաստանի հին պատմութիւնը, Կորենացու համաձայն, եւ հասցնելով մինչեւ Տեղբանը, կիրկնէ Կորենացու հարցը. «Եւ այդքան անուանք եւ ղորոյցք թէ հարցեալ լինի յորմէ՞ գու գիտեւ. գիտացէ ղի Քաղդէացոց մատեանքն մեզ ընձեռեցան, որք կան ի նիւուէ եւ յԵւսիայ առ Տեղերիւ դրեալ:» Ի հարկէ Յովհաննէս Կոթողիկոսը չէ տեսած ոչինչ քաղդէական մատեաններ, որոնք պահված էին նիւուէի եւ Եւսիայի մէջ եւ գրված Տեղերի ժամանակը:

գրելու իւր հայրենիքի կարծեցեալ իրական պատմութիւնը և յառաջ կրերէ որպէս իւր գլխաւոր և միակ աղբիւր Մար — Աբաս — Ատինա-
յի *) զիրքը, որը նոյն ինքն Մար — Աբասի խօսքով ծագումն առել է
հետեւեալ հանգամանքներով: Միևնոյն ժամանակ պէտք է ուշք զարձնենք
այն բանի վերայ, որ Խորենացին, ձեռնամուխ լինելով իւր ազգի հին
պատմութիւնը յօրինելու կղիմէ մի հեղինակին, որին ոչ որ չէ ճանաչում
և ոչ որ չէ յիշատակում, ոչ մինչև նորա ժամանակը և ոչ նորանկող յե-
տոյ, և որին անպայման հաւատ կընծայէ նա, այն հիման վերայ միայն, ինչ
որ ինքն հեղինակը իւր մասին կասէ: Խորենացու պատմութեան այս տեղը
մեզ համար շատ կարևոր է, ուստի մենք ամբողջապէս կօրինակենք այս
տեղ: Ահա ինչ կասէ Մար — Աբասն իւր մասին **):

«Արշակ մեծ արքայ Պարսից և Պարթևաց, որ և ազգաւ իսկ Պարթև, ա-
պստամբեալ, ասնն, ի Մակեդոնացւոցն, և թագաւորեալ ի վերայ ամե-
նայն արևելից և Ասորեստանեայց, և սպանեալ զԱնտիոքոս թագաւոր ի
նինուէ, հնազանդեցուցեալ զամենայն տիեզերս ընդ իւրով ձեռամբ, սա
թագաւորեցուցանէ զեղբայր իւր զԱղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց,
պատեհ իմն համարեալ այսպէս անշարժ իւրոյ թագաւորութեանն լինել:
Եւ քաղաք թագաւորութեան տայ նմա զՄծրին (Nisibis), և սահմանս
հատանէ նմա զմասն ինչ յարևմտեայ Ասորեաց և զՊաղեստին և զԱսիայ
և զամենայն միջերկրեայս և զԹիտալիոյ, ի ծովէն Պոնտոսի մինչև ի տեղին
ուր Կաւկաս յարևմտեանն յանդի ծով, և զԱտրպատական, և այլ որ-
շաի միտք քո և քաջութիւն հատանեն, զի սահմանք քաջաց, ասէ, զէնն
իւրեանց, որքան հատանէ այնքան ունի»:

«Սորա կարգեալ զիշխանութիւն իւր մեծապէս, և հաստատեալ զթա-
գաւորութիւն իւր, կամ եղև զիտել սորա, թէ ոչ ք և որպիսի արք տի-
րեալ են ի վերայ աշխարհիս Հայոց մինչև ցնա. զքաջաց արդեօք եթէ զվա-
տաց անցեալ ունիցի զտեղի, եւ գտեալ զոմն Ասորի Մար — Աբաս Ատ-
տինայ, այր ուշիմ և վարժ քաղաքացի և յոյն գրով, զոր յղէ առ մեծ

(*) Տես նոյնպէս. Études sur les sources de l'histoire d'Arménie de Moïse de Khorène, par Victor Langlois. 1861. (Tiré du Bulletin etc. t. III, երես 531—533), Petermann—Über die schriftlichen Quellen des Moses Chorenensis. Monatsberichte, 1852, երես 37—104:

(**) Սեբեոսի խմբագրութեան մէջ այս տեղը փոքր ինչ ուրիշ կերպով է հաղորդ-
ված. «Յայնմ ժամանակի թագաւորեցայց Արշակ զորդի իւր զԱրշակ փոքր հռչեցեալ
ի վերայ աշխարհին Հայոց ի Մծրին քաղաքի, եւ զատուցանէ նմա սահմանս զԱրուսա-
տան առ երկրաւն Տաճկաց եւ առ երկրաւն Ասորեաց, և զԿասպուտիկոս առ Կիւ-
ղիկեալ մինչև ցեղը ծովուն մեծի արեւմտից եւ ցհիւսիսոյ կողմանէ ի լեռնն մեծ
Կովկաս, որ ձգի ընդ կողմանս արեւելից, եւ անցանէ առ սահմանաւն առ ամուր
աշխարհաւն Մարաց եւ հասանէ ի լեռնն Չարասպ, եւ անցանէ առ նոր Շիրակ երկ-
րաւն» Փոքր ինչ ներքեւ կ'ընշվի, որ Արշակ Փոքր թագաւորեց Հայաստանում իւր
եղբոր Աղարշակի հետ միասին: Տես երես 12—14:

եղբայրն իւր Արշակ արժանի ընծայիւք, բանալ նմա զղիւանն արքունիս
Եւ դրէ առ նա ձե բանից օրինակ զայս: «Արշակ թագաւոր երկրի և ծո-
վուս որոյ անձն և պատկեր որպէս և է իսկ մեր աստուածոց, իսկ բազդ
և պատահումն ի վեր քան զամենայն թագաւորաց, և մտաց լայնութիւն
որչափ երկնի և ի վերայ երկրի: Աւաղարշակ կրտսեր եղբայր քո և նիգա-
կակից, որ ի քէն կարդեալ արքայ հայոց, ողջ լեր ամենայն յաղթու-
թեամբ »:

«Քանզի պատուէր ընկալայ ի քէն քաջութեան և իմաստութեան հոգ
տանել, ոչ երբէք անփոյթ արարեալ զքոյոյն խրատու, այլ ինամ տա-
րեալ հոգացաց ամենայնի, որչափ միտք և հասողութիւն բաւեցին: Եւ
այժմ ի քումմէ խնամակալութենէ զետեղեալ թագաւորութիւնս, խոր-
հուրդ ի մտի եղի գիտել, թէ ոյք ոմանք յասաջ քան զիս ախրեալ աշ-
խարհիս հայոց, և ուստի նախարարութիւնքս որ աստ կան: Զի ոչ կարդք
ինչ լեալ աստ յայտնի և ոչ մեհենից պաշտամունք, և ոչ զխաւորաց
աշխարհիս առաջինն յայտնի է և ոչ վերջինն, և ոչ այլ ինչ օրինաւոր,
այլ խառն ի խուռն ամենայն և վայրենի »:

«Ասան որոյ աղաչեմ զքո տէրութիւնդ, հրամայես բանալ զղիւանդ
արքունի ընդդէմ անդ եկելոյ առաջի քոյոյ հզօր տէրութեանդ, զի զը-
տեալ ըզձախն եղբօր քոյ և որդոյ, բերդէ զստոյդն փութապէս, և զմեր
հեշտութիւն, որ ի կամակատարութենէ լեալ, քաջ գիտեմ խնդութիւն
քեզ լեալ: Ողջ լեր երեւելիզ բնակութեամբ ի մէջ զից »:

«Եւ ընկալեալ Արշակայ մեծի զգիրն ի ձեռաց Մար — Աբայ — Վատինայ,
մեծաւ լրջմտութեամբ հրամայէ առաջի առնել նմա զղիւանն արքունի որ ի
Նինուէ, միանգամայն և ուրախացեալ այսպիսի միտս ունել եղբօր իւրոյ՝
որում զկէս թագաւորութեան իւրոյ հաւատացեալ էր: Եւ խուզեալ սորա
զամենայն մատեանս, դտանէ մատեան մի հելէն գրով, յորոյ վերայ էր,
ասէ, վերնագիրն այսպիսի »:

«Այս մատեան հրամանաւ Աղէքսանդրի ի քաղդէացւոց բարբառոյ փո-
խեալ ի յոյնն, որ ունի զբուն հնոց և գնախնեացն բանս »:

«Յայտմ մատենէ Մար — Աբաս — Վատինայ զմերոյ ազգիս միայն հա-
նեալ զպատմութիւն հաւաստի, բերէ առ արքայ Աւաղարշակ ի Մծբին
յոյն և ասորի գրով: Զոր առեալ անձնագեղոյն և քաջաղեղան արին
Աւաղարշակ, կորովաբանոյն և հանձարեղի, առաջին իւրոյ գանձուն հա-
մարեւով դնէր յարքունիսն ի պահեստի մեծաւ զգուշութեամբ, և զմասն
ինչ ի յարձանի հրամայէ զրոշմել »:

Վեռ ևս Վատմէր ուշք դարձրեց Քրիստոսի ծննդից երկու դար առաջ
Նինուէի զիւանատան մասին եղած տեղեկութիւնների անյարմարութիւնների
վերայ, կասկածելով, որ այդ ժամանակը Նինուէն, ենթադրելով մինչև ան-
գամ որ գոյութիւն ունէր, ունեցած լինէր թագաւորական զիւանատներ:
Այստեղ ներքև մենք ամբողջապէս առաջ կրերենք Վատմէրի կարծիքը
այս նիւթի մասին, որ ուրիշներից աւելի սաստիկ կասկած կ'այտնէ Մար -

Աբասի *) պատմութեան իսկութեան մասին: Միևնորոշ մտքով կհասին Մար — Աբասի վերոյ սիրիական մատենագրութեան և պատմութեան հը-

*) « Այս պատմաճը ճշմարիտն առած, առակի բոլոր յատկութիւններն ունի նախ շատ կասկածելի է. որ Աբշակի ժամանակը, Նինուէ քաղաքը, ենթադրելով որ նա կար, ունեցած լինէր թագաւորական դիւանատները: Երկրորդ. Աղէքսանդր իւր կարծ տակարէզում չունեցաւ ոչ ժամանակը եւ ոչ երեւի կամքը թարգմանել առաջ պատմական յիշատակարանը քաղզէտրէնից յունարէն: Երրորդ. Մար — Աբաս — կոտորույթնունը չէ պատկանում Աբշակի ժամանակին. այն բաւերը, որոնցից նա կկազմվի կգտնվին Ասորիների մէջ միայն քրիտոստէութեանից յետոյ: Մար, ինչպէս յայտնի է կնշանակէ սէր. Աբբաս իբր անունն է, եւ բաւական ընդհանրացած է քրիտոստէութեանի մէջ, կատինայ բաւը, ինչպէս որ Լակրոզ կկարծէ, սիրիական վերջուորութիւնն է, որ կնշանակէ նրբամա (subtil): Աւրեմ կարելի է կարծել, թէ բոլոր այս պատմութիւնը շինծու է, թէ Աղէքսանդրի հրամանով յունարէն թարգմանեալ համարված գիրքը կարելի է եղած լինի Բերոզի գրած սրտմաթեան մի օրինակ, թէ մի քրիտոստէայ Ասորի, իւր ձեռին ունեցած լինելով այս գրականական գործը եւ քաղցելով նորանից պատմական տեղեկութիւնները, կամեցած լինի բարձրացնել այս գործի փառքը, յատկացնելով նորան այն պատիւը, որ իբր Աղէքսանդրի նման լուսաւորված իշխանի ուշադրութիւնը կգրուէ, եւ թէ այս առակը, որ արեւելցիների պարծենկոտութիւնը կբաւականացնէ, ընդունած է Մովսէս Խորենացին դմարմաճը, եւ նորա օրինակով, Հայաստանի բոլոր սրտովիչներա: Տես Կատրվէր — Observations sur la ville de Ninive, troisieme article, Journal des Savants, 1850, երե, 365, Չենը կարող պարտեղ չբերել Յրէրէից մի հաստած (Freret. — De l'annee arménienne, t. XII, երեա 207—208), որը անցեալ դարում իւր բնական սրտմաթեամբը դնահասեց Մար—Աբասին. « Մար—Աբաս, որ գրած է Բրիտանից մօտ մի գորտ աւաջ, կատու է հաստատի վկայ լինել իւր ժամանակի մերձաւոր իրողութիւնների, բայց կերելի որ այն ամեն բանը, ինչ որ նա ասած է հին պատմութեան մասին, միայն պատմական առակների ժողովածու է, որոնք ջրիւ կգտնվին հելլենաբան եւ ասորեբան էբրայցիների գործերի մէջ, որոնք կամեցած էին քաղզէական. յունական եւ ասորական առասպելները յարմարացնել Մովսէս Խորենացու պատմութեան հետ: Մենք կարող ենք իմանալ Մար—Աբասի տրիտութիւնը եւ մինչեւ անգամ խաբէութիւններ ասելու համարձակութիւնը նորանով, որ նա յառաջ կբերէ Աղէքսանդրի հրամանով քաղզիտրէնից յունարէն թարգմանված եւ Նինուէի գիւանատներում պահպանված ձեռագիրը, որտեղից Պարթեւների Աբշակ թագաւորը թոյլ տուաւ հանել այն եւ ուղարկել իւր եղբոր Հայաստանի առաջին Աբշակունի թագաւոր Վաղարշակին, որ թագաւորած է 128 թուից մինչեւ 106 թիւը Բրիտանի ծննդից առաջ: Մար—Աբաս կարող էր չգիտենալ, որ Նինուէ, ասելով լինելով ԵՅԹ թուին Բրիտանից առաջ, Բաբելոնցիների եւ Մարերի ձեռով, բոլորովին կործանված էր եւ անոյացած մօտ 500 տարի եւ թէ պատմական բոլոր յիշատակարանները տարած էին Լիբանան, Պարսկաստանի առաջին թագաւորների օրով, եւ այս մեզ կծանուցանէ եզրաս: Մար—Աբասի յառաջաբանը կարելի է միայն համեմատել այն նախերգանքների հետ, որոնք կգտնվին Իսպանիայի ասպետական վիպառոտութիւնների սկզբում. այնտեղ կտեսնվի միշտ որ գիւցազնի պատմութիւնը հանված է սասորիկրեայում գտնված քաղզէական կամ յունական մի որ եւիցէ հին ժամանակագրութեանից: »

(*) Moïse de Khorène si crédule et si honnête. . Renan, Hist. des lang. Sémit. երեա 241. K. Blum, Herodote und Ktesias, Heidelberg, 1836, երեա 143—164

մուտ անձները, Բէնան, Լավիժրի և ընդ եթէ որ Ատորմէրի բոլոր առարկութիւնները (օրինակ, Աղէքսանդրի այգւլիսի շնչին բաներով պարագեւ լու ժամանակը շունենալուն մասին, Բէրոզի մասին և ընդ) Հիմնաւոր չեն, գոնէ նոցանից մի քանիսը բաւական ծանրակշիռ են։ Աւշադրութեամբ կարգալով «Հայաստանի պատմութիւնը» Հետաւորութեամբ կիմացվի, որ Խորենացին սխալված է իւր աղբիւրից և խաբէութեան զոչ եղած է։ Խորենացու արդարութիւնը և պնդութիւնը կիսոստովանին մինչև անգամ նոքա *)։ որոնք նորա առ Մար — Աբաս ունեցած Հաւատարմութիւնը բոլորովին չեն ընդունում, ուստի յետագայ բացատրութիւնների մէջ մի կողմ կ'ընդունէր Խորենացուն և մեր խօսքերը կուղղենք ուղղակի Մար — Աբասին։ Գրականական կեղծութիւնը մեծ մասամբ ունի ինքն ըստ ինքեան նշաններ, որով վաղ կամ ուշ կ'այայտնվի և ինքն կրնձեռէ խուզարկողին իւր դէմ յայտնի ապացոյցները։ Մեղադրելով Մար — Աբասին կեղծութեան կողմից, մենք կաշխատենք գտնել մեր կարծիքի հաստատութիւնը նոյն ինքն նորա խօսքերի մէջ։

Մովսէս Խորենացու Մար — Աբաս — Ատորմէրի մասին տուած տեղեկութիւններից ուշք դարձնենք հետևեալ կէտերի վերայ։

1) Որ Մար — Աբաս — Ատորմէրի Ատորի գիտնականը եղած է Քրիստոսի ծննդից 150 տարի առաջ, որովհետև նա ինքն իւրեան կհամարի Մեծն Արշակի ժամանակակից, այսինքն, Միհրդատ առաջին, որ կապրէր այդ ժամանակը։

2) Որ նա աշխատեց Նինուէի դիւանատների մէջ պահված յիշատակարանների համաձայն։

3) Որ նա այս դիւանատների մէջ գտած է մի գիրք այս վերնագրով՝ «Այս մատեան հրամանաւ Աղէքսանդրի ի Քաղղէացուց բարբառոյ փոխեալ ի Յոյնն, որ ունի զբուն հնոց և զնախնեացն բանս»։

4) Որ Մար - Աբաս նորանից քաղուածներ արաւ ասորական և յունական լեզուով և բերաւ Վաղարշակ Թագաւորին, որ հրամայեց նոցա մի մասը փորագրել արձանի վերայ, և

5) Թէ երկու հազար տարուց ի վեր մինչև մեր ժամանակը նոյն ինքն Հայաստանում չկային պատմական գրուածներ նորա վիճակի մասին, և նոցա մասին որ և է տեղեկութիւններ ստանալու համար հարկաւոր էր ուղարկել ասորի գիտնականին Նինուէի դիւանատները։

Քննենք այս կէտերը և տեսնենք, արդեօք չկայ իւրաքանչիւրի մէջ կասկած յարուցանող հանգամանքները, իսկ բոլորի մէջ միասին — այնքան անյարմարութիւնների և ժամանակագրական վրիպակների հաւաքումն, որ մենք համարձակ կարող ենք անուանել Մար - Աբասին կամ հեղինակ նորան վերագրված գրքի, և կամ խաբեբայ։

Սկսենք Նինուէի դիւանատից, Ներկայ ժամանակումս արդէն բոլորին յայտնի է, որ Ատորմէրի բոլոր ժողովուրդներից աւելի շուտ Միջագետքի բնակիչները սկսեցին գործածել պատմական գրութիւն, որոնցից Ատորես-

տանցիներ և յետոյ Բարեխոնացիներ այս գործի զարգացումն հասցրին, իրեանց տառերի յատկութեան համաձայն, հնարաւոր սահմաններին: Ասորեստանի ամենահին քաղաքներից մէկն մէջ, Նինուէի մէջ, սովորութիւն կար XIII դարից սկսած Քրիստոսի ծննդից առաջ, շինութիւնների վերայ հանդէս բերել արձանագրութիւններ, որոնք պատերազմասէր թագաւորների այս կամ այն քաջութիւններ ցոյց կտային: Ներկայ ժամանակումն նոցա մի մաս փոխադրված է Փարիզի և Լոնդոնի թանգարաններում: Այս արձանագրութիւնների մէջ շատ անգամ շատ մանրամասնաբար կրթութիւն թագաւորների գործերի վերայ և կարգով կպատմի նոցա զանազան երկիրներում արած արշաւանքների մասին: Օրինակ Սարգոնի այլպիսի ահագին արձանագրութիւնները կարգացած և բացատրած է Օպպերտ *): Բայց դոցա նման արձանագրութիւնները, որոնք գտնված են Ասորեստանի հին քաղաքների տերակների մէջ, թէև առաջնակարգ պատմական յիշատակարաններ են, չեն կարող թագաւորական դիւանատներ անուանվել:

Ասորեստանի վերջին թագաւորներից մինն էր Աշուր-բանի-պալ, այն Սարգանաբաղ, որին Ստեղծող (Diod. sic. II 23—37) կնկարագրէ փափկասէր, ցանկասէր, բոլոր իւր ժամանակը կանանոցի մէջ անցուցանող, ամբթալի մոլութիւններին անձնատուր եղող, և վերջապէս իւր բոլոր կանանց և հարստութիւնների հետ իրեան այրող անձն: Բայց իրապէս ոչինչ այլպիսի բան չէ եղած: Սենեքերիդի թոռն և Ասար-Գալինի որդին Աշուր-բանի-պալ (668—647—628 տարի Քրիստոսի ծննդից առաջ), եթէ ոչ ամենալաւ գոնէ Ասորեստանի ամենապատերազմասէր թագաւորներից մինն էր: Եզդիպտացիներին և Ելամիաներին **) յաղթելով Աշուր-բանի-պալը իւր թագաւորութեան մեծ մասը պատերազմների մէջ անցկացրեց: Նա իւր իշխանութեան տակ նուաճեց Բարեխոն, իւր աշխարհակալութիւնները շարունակեց Տափրասեան լեռներից դէպի հիւսիս և շատ անգամ Փոքր Ասիայի բարբարոս ազգերին զգալի կերպով կհարուածէր: Նորա հետ բարեկամութիւն և դաշն հաստատելու մասին շատ աշխատեց լիդիացի Հիդէս, իսկ հայկական (ուրարտեան) իշխանները Ասորեստանի բոլոր պատմութեան մէջ առաջին անգամ էր, ինչպէս կերևի արձանագրութիւններից, որ կամաւ համաձայնեցան ընծայել նորան ընծաներ, որ և հարկատուութեան կհաւասարվէր: Նորա կառավարութեան ժամանակը Ասորեստանի սահմանները շատ հեռաւոր տեղեր կհասնէին: Բայց Աշուր-բանի-պալ միայն աշխարհակալութիւններով չփառաւորեց իւր անունը, նա միևնոյն ժամա-

(*) Les inscriptions—de Donr—Sarkayan (Khorsabad) provenant des fouilles de M. Victor Place, déchiffrées et interprétées par Jules Oppert. Paris. 1870. Grande inscription du palais Khorsabad, publiée et commentée par M. M. Jules Oppert et Joacchim Menant. Journal Asiat. 1863, Janvier—Fevrier, *երես* 1—26.

(**) G. Smith—History of Assur—bani—pal, translated from the cuneiform inscriptions. London. 1871.

նակ արհեստների*) և զիտու թիւնների պաշտպան էր և նորա կատաւարութեան ժամանակը Ասորեստանի արհեստը զարգացման ամենարարձր կէտին հասաւ: Այլեարդ (Nirveh and Babylon, երես 345—349) 1850 թուին գտաւ 'Նինուէուժ' (այժմս բնակիչներ կանուանեն Կուինջիկ) Աշուր - բանի, սյուրեան պալատի մի մասը, որի մէջ կտեղաւորվէր թագաւորական զիւանատուն և մատենադարան: Իհարկէ, նա ոչ թէ զբքեր է գտած, այլ ամբողջ դահլիճ լցված մինչև վերը մանր գրված պիւստներով, որոնք մասամբ թրծված էին և մասամբ արևի տակ չորացած: Իւրաքանչիւր պիւստը մեր զբքերի երեսների թուահամարների նման, ունի մի որոշ նշան: Այլեարդի բանաւորներ կարողացան ժողովել մինչև 16,000 պիւստ, որոնց մեծ մասը փշրված էր, և այս բոլորը ուղարկեց Անգլիա, ուր նոքա այսօր Բրիտանական թանգարանի ամենալաւ զարդարանք կկազմեն: Նորանից ինչ որ ներկայ ժամանակումս կարողացել են նոցա վերայ կարողալ, կերևի որ այս կաւեայ պիւստների մէջ կրտվանդակվին քերականութեան պատմութեան, օրէնքի, իրացարանութեան, բնական պատմութեան, աստեղաբաշխութեան, աստեղաբանութեան հեղինակութիւններ և նոյնպէս դաշնադրութիւններ, պայմանագրեր, իշխելու**) վկայագրեր և շն: Ներկայ ժամանակումս նոցա նշանաւոր մասը հրատարակած են արդէն Բուլիթսօն, Նորրիս, Սմիս և ուրիշներ: Այս կաւեայ կտորների մէջից Սմիս գտաւ մի վիպասանական հատուած համաշխարհական ջրհեղեղի մասին, որ պարզ կերպով կապացուցանէ Աստուածաշնչի ասացուածները հնութիւնը:

Վերոյգրված խօսքերից պարզ է, որ 'Նինուէուժ' իսկապէս կային զիւանատներ և մատենադարաններ, բայց Քրիստոսի ծննդից առաջ է գարում, և ոչ թէ Բ. դարում: Գեո ևս Աշուր - բանի պալի օրով և կամ նորա մահից յետոյ, շուտով Սկիւթացիներ մի աւերիչ յարձակումն արին և քանդեցին Նինուէի կործանեցին այրեցին նորա պալատները և Ասորեստանին այնպիսի հարուած տուին, որից յետոյ նա այլ ևս չկարողացաւ բարձրանալ: Սորանով միայն կրացատրվի նորա այգպէս շուտ անկումն նորա ամենածաղկեալ զրութենից յետոյ: Այնուհետև շուտով Կիւքսար նուաճելով և կործանելով 'Նինուէն վերջ տուաւ թէ Ասորեստանի թագաւորութեան և թէ Նինուէի քաղաքական նշանակութեան, որը այն ժամանակից չկարողացաւ այլ ևս վերականգնել իւր աւերակներից: Փոքր առ փոքր աւերակները ծածկվեցան հողով և աւազով և արդէն Քրիստոսի ծննդից անմատչելի մնացան:

(*) G. Raulinson - The five great Monarchies of the ancient world. Second edition, London, 1871 Vol. II. երես 211—217.

(**) Աւերի մանրամասն տեղեկութիւններ, Նինուէի զլւսմատան եւ մատենադարանի մասին կարելի է ստանալ 1 է նորմանից. Essai de commentaire des fragments cosmogoniques de Bérose, d'après les textes cunéiformes et les monuments de l'art asiatique. Paris. 1872. երես 13—35.

առջ Գ. Ե. զարուժ, Նինուէի անունը, որպէս զոյուժիւն ունեցող քա-
զարին, հեղինակներ չեն յիշատակում: Ասորեստանի թագաւորութիւնը
հնրի համար մի մոռացված հնուժիւն էր: Աւստի երկրորդ զարուժ Քը-
րիստոսի ծննդից առաջ, Նինուէի զիւանատան մասին խօսելը պարզ ժա-
մանակազրական սխալ է: Բայց եթէ պատահմամբ Մար-Աբասը մտած ևս
լինի այս զիւանատունը. ի՞նչ կարող էր նա անել նորա մէջ: Այդ ժամա-
նակը սեպագրերի ընթերցումն մոռացված էր, իսկ Մար-Աբասը կ'յիշատակէ
Նինուէի զիւանատուն և ոչ թէ կաւայ աղիւսակներ կամ coctiles latereni
Hist. (Rat. VII, 57), ինչպէս որ Պլինիոս *) կանուանէ: Բայց ևնթագրերը
երկու անկարելի բան. զենք թէ Մար-Աբաս որևէ ճանապարհով մտած
է Նինուէի (այն ժամանակը ստորերկրայ) զիւանատունը, և նա կարողա-
ցու, իւր յուսացածից աւելի, կարգալ Քրիստոսի ծննդից 150 տարի ա-
ռաջ սեպածե գրութիւնները: Աւրեմն մենք նորանից պիտի յուսայինք այն-
պիտի տեղեկութիւնները, որոնք փոքր ի շատէ համաձայն լինէին նորագոյն
ասորաբանների Ասորեստանի զիւանատան իսկական գրութիւնները կարգա-
լով ձեռք լերած տեղեկութիւններին: Բայց ի՞նչ կտեսնե՞ք մենք յուսացածի
փոխարէն, նոյն իսկ Ասորեստանի պատմութեան վերաբերմամբ: Զարմա-
նալի և շատ անգամ բաւական նմանութիւն կտեսնենք Ասորեստանի մա-
սին Պտղոմոսի ասացուածների և Մար-Աբասի հաղորդած տեղեկութիւններ, ի
մէջ և ամենքի աչքին ընկնելով նոր տարակուսանք կ'յարուցանէ այն հե-
ղինակի ճշմարտութեան մասին, որ իբր թէ աշխատած է Նինուէի զիւա-
նատներում: Աղէքսանդրից 80 տարի և Մար-Աբասից 230 տարի առաջ,
Մար-Աբասի հաղորդած բոլոր տեղեկութիւնները (Իհարկէ բացի Հայերի
պատմութենից) ընթերցող յոյներին յայտնի էր: Արդե՞ք արժէր որ Աղէք-
սանդը թարգմանել տար յունարէն այն, ինչ որ արդէն վաղուց յայտնի էր
նորան Պտղոմոսի գրվածներից: Սորանից կերևի, որ Մար-Աբասը Քրիստո-
սի ծննդից 150 տարի առաջ ոչ մի կերպով չէր կարող աշխատել Նինուէի
զիւանատանը և դանել այնտեղ այնպիսի տեղեկութիւնները, որը վաղուց
արդէն հաղորդած էր Պտղոմոսը, և որոնք մեր ժամանակում կ'հերքովին Նի-
նուէի իսկական զիւանատան գրութիւններ. կարգալով:

Մեր դէժ՝ կարող են ասել**), որ Նինուէի զիւանատուն ասելով հեղինակը

(*) Epigenes apud Babylonios DCCXXM annorum bservationes siderum cocti-
lis laterenlis inscriptas docet, gravis auctor imprimis.

(**) Օրինակ Պ. Լանդուա կաշխատէ արդարանցել Մար-Աբասին այսպէս. «կարելի
է մտածել, որ Նինուէի զիւանատաներ ասելով պիտի հասկանանք կամ այն զիւանա-
տաների բեկորները, որոնց ժողոված էին Սելեւկայիներ ևւ յետոյ անցած էին Պտղոմոս-
ների թագաւորների ձեռք, ևւ նոցա տիրապետութեան ներքոյ էին, երբ Մար-Աբաս
— կատմայ եկաւ խուզարկելու, կամ վերջուպէս կարելի է հասկանալ Նիւրոտանայի
զիւանատաներ, որոնք Պարսկաստանի առաջին թագաւորների ժամանակը կային դեռ
ևւս, ինչպէս որ եզրաս կատմէ:» Collection. Հ. I, երես—13:

կհասկանար այս զիւանատան մի մասը, որը Աքեմենեաներ, Սելեւացիներ կամ մինչև անգամ Պարթևներ տարած են իւրեանց ամբողջութեամբ քաղաքներից մինի մէջ կամ թէ եկրատանում: Իսկապէս սորա նման մի բան կգտամէ Եգրաս. « Յայնժամ Գարեհ թագաւոր այց արտը և ինդրեաց և եղիտ ի տունս թագաւորացն գրոց յիշատակարանաց ի Բարելոնի, և գտեալ յԱմաթատի քաղաքի եկրատանացոց գլուխ մի գրոյ տումարի, և զայս ինչ գրեալ էր ի գիրս յիշատակարանին (Թ. զԼ. Զ. 1—3): « Յայնժմ ժամանակի թագաւորն Գարեհ հրամայեաց ինդիր առնել ի տունս մատենագրաց թագաւորացն, որք կային ի Բարելոնի, և գտաւ ի Բատան բարետինի (եկրաթանի), ի մարաց աշխարհին, ի տեղուջ ուր կային գիր յիշատակարանաց, ուր էր գրեալ այսպէս (Ա. զԼ. Զ. 23) »: Բայց այս կվերաբերվի առաջին Աքեմենեանների ժամանակներին և Բարելոնի զիւանատանը և ոչ Նինուէին: Այլ այդպիսի ընդդիմախօսութիւնը կհաստատէ մեր կարծիքը թէ հեղինակը չէ տեսած Նինուէ: Իսկ եթէ նա ուրիշ քաղաքում է եղած և այնտեղ Նինուէի կոչված զիւանատանը քննութիւններ արած է, այն ժամանակը ի՞նչ կարգիւ էր նորան արդեօք որ նա յիշէր այդ քաղաքի անունը. բայց նա շատ պարզ կխօսէ Նինուէ-է քաղաքի մէջ եղած զիւանատան մասին, և ոչ թէ Նինուէական զիւանատան մասին:

Միւս մատենագիրը, որն աւելի յայտնի է քան թէ Մար—Աբասը, Բերողը կասէ իւր մասին որ նա կապրէր Ալեքսանդրի օրերում և գրած է պատմութիւն Բարելոնեան աղբիւրներին համաձայն: Բայց նա կհարողովէ մեզ բոլորովին ուրիշ արժանաւորութիւն ունեցող տեղեկութիւններ: Բոլորը ինչ որ մեզ հասած է հատուածներով նորա գրվածներից, այնպիսի պատմական նիւթ է, որը հետզհետէ կստուգվի և մասամբ արդէն ստուգված է Նինուէի և Բարելոնի փորած ժամանակ գտնված արձանագրութիւնները կարգալուց:

Բերողի գիրքը հնութեան մէջ մեծ հեղինակական յարգ ունէր, և աւանդութիւն կար թէ մէկը (գուցէ Աղէքսանդր) որին Բերողն իւրեան ժամանակակից կհամարէ) նորան թելադրած է թարգմանել այն յունարէն լեզուով: Մենք կկարծենք թէ Մար—Աբասն ևս կամեցած է իւր կարծիքական աղբիւրին այդպիսի մի երևելի հեղինակական ծագումը տալ, ուստի նա գրեթէ բառ առ բառ կկրկնէ այն, ինչ որ ասված է Բերողի գրքի մասին այսինքն, իբր թէ նա (Մար—Աբասի մտացածին աղբիւր) նոյնպէս թարգմանված է քաղաքներից յունարէն Աղէքսանդրի հրամանով: Սորանից է որ նա անանուն է և մի օտարոտի վերնագրով: « Այս մատենան հրամանաւ Աղէքսանդրի փոխեալ է ի քաղաքացոց ի յոյն, և ըն »:

Թէ Մար—Աբասի աղբիւրն մտացածին է, մեզ կհամոզէ և այն հանգամանքը, որ Աղէքսանդրի հրամանով (հետևաբար առանձին ուշադրութեան արժանի գիրք) յունարէն թարգմանված (հետևաբար Յոյների կարգալու համար պատրաստված) պատմական բովանդակութիւն ունեցող գիրքըն անյայտ կմնայ նոյն ինքն Յոյներին: Ոչ որ նորան չէ ճանաչում և ոչ

մի խօսք անգամ կ յիշվի այդ տեսակ գրվածի մասին. նոյն ինքն Մար—Աբասը կարևոր է համարած ծածկել թէ հեղինակի անունը և թէ գրքի վերնագիրը: Նաև երկրորդ դարից յետոյ նախ քան Քրիստոսի ծնունդը մինչև Մովսէս Խորենացին, յունարէն լեզուով գրված պատմական զիրքն անյայտ կմնայ ամենքին: *) Աւրեմի կարելի է արդեօք երևակայել որ այն զիրքը որի վերայ Աղէքսանդրը ուշք դարձրեց և որը թարգմանել տուաւ յունարէն լեզուով, 800 տարւան ընթացքում անյայտ մնար նոյն ինքն Յոյներին, և միայն Մովսէս Խորենացին նորա վերայ ուշք դարձներ: Պաշտպանութիւն, որ նա հնութեան մէջ գրված չէր, այլ Խորենացուց փոքր ինչ առաջ որ մին գրած է, և վերնադրած են Մար—Աբաս անունով մէկին, որ Մեծն Արշակի ժամանակակից էր: Նա այն ժամանակում ևս մինչև անգամ իւր շնչին բովանդակութեան և անքննական շարայարութեան պատճառով, չգրաւեց լրջմիտ անձների ուշադրութիւնը, Խորենացուն նա գրաւեց իւր բովանդակութեամբ, այսինքն Հայաստանի պատմութեան բովանդակութեամբ, որի մասին ոչինչ բան չկար գրված: Հանդամանքներն այնպէս էին, որ Մովսէս Խորենացին որտեղից որ լինէր պէտք է ձեռք բերէր Հայաստանի պատմութիւնը, Ամենայն մատենագրական աշխատութիւնը յարդող ի բնէ բարեխիղճ Մովսէսը ընդունակ չէր հնարելու պատմութիւնը առանց աղբիւրներին, առանց հեղինակութեան, մի խօսքով առանց առաջնորդող գրքի: Բայց երբ գտաւ այդպիսի մի գիրք, նա զմայլմամբ կողջագութեւ, առանց մանրամասն քննելու նորա արժանաւորութիւնները, նա գտաւ այնպիսի գիրքը, որ ազատեց նորան դժուարին դրութենից, նորանից կինդրեն գրել Հայաստանի պատմութիւնը, բայց նա չունէր բոլորովին գրաւոր աղբիւրներ, **) իսկ բերանացի աւանդութիւններին նա հաւատ չէ ընծայում:

(*) Պ. Լանգլուսայ (Collect. t. I, Introduction, էրես 10) Սուրբ Հերոնիմոսի գրքի վերջերի մէջ գտնելով կատինա անունը, կյայտնէ իւր համոզմունքը, թէ յիշեալ կրօնաւորը ի նկատի ունեցած է մեր Մար—Աբաս—կատինային, եւ իբր թէ նա գիտէր նորա աշխատութիւնները: Գործին ծանօթանալով, մեք միայն կնկատեմք, որ ս. Հերոնիմոս ծանօթ է մի կատինայի փոքր դաշնագրութեան հետ, որը ոչինչ յարաբերութիւն չունի մեր հետադասած հեղինակի հետ, Ահա այս տեղը. «Legi, et cujusdam Catinae, quem Syri Ագաօն id est acutum et ingeniosum, vocant brevem disputatiunculam, putantis costorum ordinem duodecim tribuum describi in salitudine, ad Orientem et Occidentem, Septentrionem et Meridiem, quae sibi invicem, et charitate et consanguinitate sociantur et hac esse rotam in rota, quae ducantur a Spiritu, et nube prategantur in eremo, et columna ignis illuminentur in nocte, ne crevertantur in Aegyptum, sed semper ad terram repromissionis ire festinent. Sancti Rusebi Hieronymi Opera Omnia, T. V. cap. I. 12. Patrologia, series latina. t. XXV, 1865.

Պարզ կերտւի, որ այստեղ այն բազմութիւ անձներից մինի մասին կխօսվի, որով կկրէին այս մականունը, Տես ներքեւ:
 (***) Թովմայ Սրբորունու ասածին համաձայն, Քրիստոսի ծննդից առաջ առաջին դար

անուանելով նոցա անհեթեթ բանք, Ընդհակառակն գտնելով իւրեան հարկաւոր զիրքը, զրաւիչ վերնազրով, հեղինակական հնուձեռամբ, — նա լիովին վստահօրէն հաւատ ընծայեց նորան:

Դասնանք Մար—Աբաս—Ատտենային: Ի՞նչի նա իւր աղբիւրը շանու- նեց ուրիշ յայտնի անձի կամ Բերողի շարադրութիւն: Մեր կարծիքով, այս շատ պարզ կբացատրվի: Բերողի անուն տալուց յետոյ, նա պէտքէ ամենայն ինչ ասէր Բերողին համաձայն, իսկ նորա ժամանակը Բերողի ամբողջ հեղինակութիւնն արդէն չկար: այլ կային Պօլիհիստօրից և Արիւ- գենոսից համառօտված հատուածներ: Բացի նորանից, Բերողը ոչինչ չէ ա- սած Հայերի մասին, իսկ Մար—Աբաս անշուշտ պիտի մասնացոյց լինէր այնպիսի հին պատմաբանի վերայ, որը խօսած լինէր Հայերի մասին, բայց այսպիսի պատմաբանը չկար, ուստի Մար—Աբասը ստիպված էր կամ լռել կամ հնարել իւր համար կարծեցեալ մի հեղինակութիւն ընթերցողներին համոզելու համար: Աւսումնասիրելով Խորենացու պատմութեան առաջին զիրքը, շատ դժուար չէ համոզվել, որ Մար—Աբասը կշարադրէ Հայաստանի պատմութիւնը, առնելով նորա բովանդակութիւնը հայկական ժողովրդա- կան ասացուածներից և նոցա Ատեղիոսի նախ—Ասիայի պատմութեան ձև տալով, որը միևնոյն ժողովրդական աւանդութիւնների պտուղ էր: Այս իւր մանուկի համար ահա Մար—Աբասը նախահայր կպտուէ և յարմարաւոր ոչինչ չգտնելով, նա կհաւատացնէ ընթերցողին, թէ ինքն չէ շարադրած իւր զիրքը, այլ միայն արտադրած է Աղէքսանդրի հրամանով թարգման- ված հին զբքից: Միւս տեղը (զիրք Ա. զլ. 14) նա իւր աղբիւրը կանուանէ Բաբար—որդի տիւնի մարտն: Այս ասացուածը կյիշեցնէ Ատեղիոսի (Դիոդ. II, XXX, 11) այն տեղը, ուր նա կասէ, թէ իւր ասացուածները քաղած է Բա- բար—որդի գրքերէց, և այս ոճը շատ անգամ կթարգմանվի Բաբար—որդի քա- ոսով, մինչդեռ սա կնշանակէ Բաբար—որդի գրքը, այն մտքով ինչ մտքով որ կգործածէ այս ոճը Ֆիրզուսին Շահ—Նամէ բառը, այսինքն Բաբար—որդի գրքը և կամ Բաբար—որդի գրքը: Մար—Աբասի Ատեղիոսից կախումն ունենա- լը ակնյայտնի կերևի: Բայց ոչ մի բանից չէ երևում, որ Մար—Աբասը օ- գուտ քաղած լինի անմիջապէս Ատեղիոսի բնազրից: Արովհետև նորա Ատեղի- ոսից բոլոր քաղվածը կգտնվի Դիոդորոսի և մինչև անգամ Եւսիբէոսի մէջ:

բում Գիտնիս Պաղովէի դուստր Ալէնպատրա գաւա Աղէքսանդրեան գիւնատանը մագաղաթեայ ձեռագիր, որի մէջ գրված էր յունարէն լեզուով Ասորեստանի Սենե- քերիմ թագաւորի սերունդից յաւաջացած հայկական իշխանների, Աբժրուսի ցեղի պատմութիւնը: Այս ձեռագիրը ուրիշ հարուստ ընծաների հետ միասին ուղարկեց Արշակունի չորրորդ թագաւոր Տեղբանին, որ յայտնի էր իւր աշխարհակալութիւննե- րով եւ հռովմայեցիների դէմ արած դժբաղդ պատերազմով: Աւրիշ փաստերի պա- կատութեան պատճառով, չէ կարելի այս տեղեկութեան արժանահաւատութեան մտ- սին դատել, թէ եւ նորա մէջ չէ բովանդակվում ոչինչ անկարելիութիւն, թովմայ Աբժրուսին հաղորդելով այս տեղեկութիւնը մասնամիշ կլինի Խորենացու եզրօր Գամբէի վերայ, որի պատմական գրվածները մեզ հասած չին: Տես երես 46—47:

ուրեմն այս կողմից ևս տարակուսութիւն կ'յարուցանի թէ արդեօք նա չէ քաղած իւր տեղեկութիւնները հնութեան մասին այս վերջին երկուսի մէկից . . . Առ հասարակ բոլորը մեզ կոտիպէ ենթադրել, որ Մար—Աբասին իւր ժամանակում մատչելի էին այն աղբիւրները, որոնցից կարող էր Խորենացին ևս օգտուիլ: Միայն Խորենացին, քաղելով իւր տեղեկութիւնները ժողովրդական աւանդութիւններից, վիսպասանական երգերից և պատմական մատենագիրներից, չէր համարձակի սուտ ասել ընթերցողին, այլ ուղղակի կասէր թէ ինչ և ուր է լսած, մինչդեռ ասորի գիտնականը միևնոյն ճանապարհով ժողովված տեղեկութիւնները կ'վերադրէ մի պատմաբանին, որ ապրած է Ադեքսանդրի միջոցում:

Դառնանք մեր քննած հեղինակի Մար—Աբաս—Կատինա անունին *): Մի քանիս կկարծեն, որ Կատինա մականունը Մար—Աբասը ստացած է Կատինա քաղաքից (Կատինա հին սիրիական արտասանութիւն է). բայց այս դէպքում նորան պիտի անուանէին Kōtinojō (Kātinojā), այսինքն Կատինայի: Աւելի հաւանական է ենթադրել, որ այս բառը ծագած լինի Katino բառից (Katina) իմաստուն, այսինքն Մար—Աբաս իմաստուն, գիտնական: Մար (Mār) տիպոսը կարվէր քրիստոնէական դարերում **) Ասորիքում սուրբ պատուաւոր անձներին և կնշանակէր Պարոն, Տէր, Հայր, այն մտքով, ինչ մտքով որ վերջին բառը կգործածեն հոգևորականների անունների համար: Հայր Պետրոս, Հայր Յովհաննէս: Աւրեմն ամբողջ անունը պիտի նշանակէ Պարոն Աբաս իմաստուն, Հայր Աբաս իմաստուն, ուրիշ համանունակիցներից զանազանելու համար, որովհետև Մար—Աբաս կամ Մար—Աբաս անունը շատ սովորական էր քրիստոնէական դարերում Ասորիների մէջ, և շատ եպիսկոպոսներ կրէին: Տես Renan—Histoire des langues sémitiques. Երես 256. H. Peterman—Ueber die schriftliche Quellen des Moses Choren. Monatsberichte, 1852. Երես 87—104:

Որպէս զի հեռացնենք քանի մի տարակուսութիւններ, կաւելացնենք, ո՛ր այն կեղծողը, որի շարագրութիւններից օգուտ է քաղած Խորենացին ծած-

(*) Nomen, ut La—Krosius monet, proprie Syriacum. Mar—ybas—Katinensis, quod est, Dominus Jbas ex oppido Catina, qui locus idem fortasse est, atque ille, cuius in Syria positi mentio fit apud Assemani Bibliothecae Orient. tom. II, p. 351. Notat etiam La—Krosius vocem Catina in lingua Syriacâ Subtilem significare, quasi id nomen inde ei potuerit esse datum. Տես Վիսամի երես 21:

(**) Խորենացու (Բ. գիրք. 30) մէջ կ'գտնուի Մարիհաբ անունը, որ իբր թէ կարտուսի Աբգարի եւ Փրկչի մի ժամանակակցին, որից կարելի կլինէր եղբակացնել, որ Մար տիպոսը կ'գործածվէր նաեւ քրիստոնէութեան դարից առաջ, բայց այս հակառակ չէ մեր կարծիքին, որովհետեւ այն աղբիւրը, որտեղից Խորենացին քաղած է, Ղերուբնայ (տես ներքեւ) եւ մատենագրի շարագրութիւն է որ Գ.—Գ. դարի հեղինակ է, թէեւ իւրեան Աբգարի ժամանակակից համարել սուած է:

կած է իւր անունը և վերադարձ է իւր աշխատութիւնը մի Մար—Աբասին, որ հնարված անձն է, բայց մենք ուրիշ անունը չունենալու պատճառով կպահանջ այս անունը, որով պիտի հասկանանք այն Ասորուն, որ սխալեցրած է Խորենացուն:

Եթէ ասորի գրականութեան տեղեակ գիտունները միաձայն հաստատեն, թէ Մար—Աբաս անունը կարող էր գործածվել միայն քրիստոնէական դարում, ուրեմն մեր ենթադրութիւնը այն մասին թէ Եզրեսայի դպրոցի Ասորու գրած չարագրութիւնը հեղինակը նախաքրիստոնէական է կարծել տուել, ամենեին անհնարաւոր չէ:

(Ստորագրում):

Ս. Տ. Գ.

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ,

ՏՊԵՐԳՈՒԹԵԱՆ ԷՆԸՐՕՂ:

(« Աբարատ », հոկտեմբեր)

Թ.

Իւր ընկերների աջքը աւելի հեռու շրջեցնելու համար իւր ձեռնարկութեան իսկական նպատակից, Գուտտէնբէրը պարապումէր մի եւ նոյն ժամանակ երկրորդական արուեստներով, ծածուկ շարունակելով իւր հետազոտութիւնները միեւնոյն կատարելագործութեան համար: Նա սովորեցնումէր Գրիտցէհէնին թանկագին քարեր տաշելու արուեստը, ինքն եւս յղումէր վիճակից ասպակի հայելի շինելու համար. նա շինումէր հայելիներ եւ դնումէր պղնձի շրջանակների մէջ, որոնց գարդարումէր հին ու նոր կտակարանից, դիւցարանութեանից վերցված պատկերներով: Այս հայելիները, որոնք ծախվումէին Ախէն քաղաքի տօնավաճառում, մատակարարումէին բոլոր ընկերութեան պիտոյքը, ուստի եւ միջոց էին տալիս Գուտտէնբէրին ծածկելու իւր դիւտի համար արած ծախսերը:

Իւր պարապումը աւելի եւս ծածկելու համար հասարակութեան անդադար հետաքրքրութիւնից, որ արդէն սկսել էր կարծիք տանել նորա կախարդութեան մասին, Գուտտէնբէրը փոխադրվեցաւ քաղաքից դուրս: Նա շինեց իւր արուեստանոցը հին սուրբ Աբրահամի վանքի աւերակների մէջ: Այստեղի միայնութիւնը, որտեղ դրացի էին միայն քաղաքի աղքատ բնակիչները, շատ յարմարաւոր էր իւր առաջին փորձերի համար: Վանքի ընդարձակ բակերի խորերում Գուտտէնբէրը տեղաւորեց իւր ընկիւներին, որոնց դորձը կարօտ չէր ծածուկ պահվելու, իւր համար իւր գործերին յարմարաւոր մի խուց ընտրեց: Նորա դուռը միշտ կողպված էր լինում կողպէքով եւ ոչ ոք երբէք ոտ չէր դնում նորա շէմքը: Կարծումէին թէ նա այնտեղ պարապումէր յատակագծեր շինելով եւ հայելիների համար նկարներ պատրաստելով, բայց նա անցուցանումէր այնտեղ անքուն դիշերները չարչարվելով իւր պիտի վերայ: Նա կարումէր ծառից շարժուն տառեր եւ մտածումէր թէ ինչպէս մետաղից